ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 06.11.2015թ. ստացվել է բողոք:

Բողոք բերող անձ՝ «Լիվասա» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ԳԱԿ-ՇՀԾՁԲ15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, ՀՀ պաշտպանության նախարարություն կողմից լվացքի և մաքրման ծառայությունների ձեռքբերում:

Բողոքի առարկան և պահանջը՝

1. «ԳԱԿ-ՇՀԾՁԲ15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 4-րդ արձանագրության 1.1 կետով «Լիվասա» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու մասին որոշումը չեղյալ հայտարարելու և Ընկերության հայտը վերագնահատելու պահանջների մասին:

2. Որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառել ժամանակավոր միջոց՝ այն է կասեցնել N 6 արձանագրության 1.2 կետով կայացված որոշումները:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ